ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/25

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Արմավիրի մարզպետարան
Մասնակից՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի և Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցում, ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1494-2020 գրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի 05.02.2020թ.-ի թիվ 05/6.1/00599-2020 գրության հիման վրա, 10.02.2020թ.-ին «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 10.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/25 համարի ծածկագիրը և 14.02.2020թ.-ին ու 27.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 27.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2020թ.-ին:

2. ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Արմավիրի մարզպետարանը 05.02.2020թ.-ի թիվ 05/6.1/00599-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից 2019թ. դեկտեմբերի 2-ին հայտարարվել է ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման «ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցել են <<Ֆոր էյ Քնսալթինգ>> և <<էյ-էն Աուդիտ>> ՓԲԸ-ները, առաջին տեղ զբաղեցրած /ընտրված/ մասնակից է ճանաչվել <<Ֆոր էյ Քնսալթինգ>> ՓԲԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա (եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից) <<Ֆոր Էյ Քնսալթինգ>> ՓԲԸ-ն չի կատարել օրենքի վերը նշված պահանջը և զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ մասնակցին “Գնումների մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետի հիման վրա գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու նպատակով:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 10.02.2020թ. գրությամբ դիմել է «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1494-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը 21.02.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ Արմավիրի մարզպետարանի կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն և ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին ճանաչել ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով որպես ընտրված մասնակից, որին անգործության ավարտից հետո կառաջարկվի կնքել պայմանագիր:

Այնուհետև «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն հիմքով, որ Ընկերությունը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը՝ պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ապահովումը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Այստեղ առկա են գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տված մի շարք խախտումներ, որոնք ոչ իրավաչափորեն հանգեցրել են տվյալ մասնակիցների համար գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգ: Մասնավորապես.

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն հիմքով, որ Ընկերությունը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, այն է՝ պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա.

Ընթացակարգի հրավերի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով նախատեսվել է, որ.

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ:Ընդ որում, պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝ նվազագույնը 4 ներքին աուդիտոր, որոնք պետք է ունենան հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և աուդիտորի մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:

Հրավերի 9.5-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր….:

Նույն հրավերի 9.7-րդ կետի համաձայն՝ մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման

առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվել է 4 ներքին աուդիտորներ, ինչը պահանջվում էր վերը նշված ընթացակարգի հրավերի աշխատանքային ռեսուրսներ բաժնում:

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն օգտվելով իրեն վերապահված իրավունքից 25.12.2019թ. գրություն է ներկայացրել «ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով հայտարարված գնումների ընթացակարգի համակարգող Ա. Պողոսյանին, որով մասնավորապես խնդրել ենք հայտնել՝ ի պատասխան Ձեր 23.12.2019թ. ներկայացված պայմանագրի նախագծին հայտնում ենք հետևյալը: Խնդրում ենք ներկայացնել 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրի նախնական տարբերակը:

Չստանալով որևէ պատասխան 25.12.2019թ. գրությանը, «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն նույն բովանդակությամբ գրությունը 26.12.2019թ. ներկայացրել է արդեն ՀՀ Արմավիրի Մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վարդան Վարդազարյանին:

Ուսումնասիրելով 27.12.2019թ. ներկայացված 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրի նախնական տարբերակը՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն 10.01.2020թ. Վարդան Վարդազարյանին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը՝

Ուսումնասիրելով ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից 27.12.2019թ. մեզ ներկայացված ներքին աուդիտի 2020թ. տարեկան ծրագիրը և ի պատասխան ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից 23.12.2019թ. ներկայացված ներքին աուդիտի պայմանագրի նախագծին հայտնում ենք հետևյալը.

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02 ծածկագրով հայտարարված մրցույթի հայտի՝ աշխատանքային ռեսուրսներ բաժնում պահանջվում է 4 ներքին աուդիտորներ, սակայն ՀՀ Արմավիրի մարզպետարանի 2020թ. ներքին աուդիտի տարեկան ծրագրում պահանջվում է 5 ներքին աուդիտորներ:

Հաշվի առնելով վերը նշվածը խնդրում ենք չեղյալ համարել ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02 ծածկագրով հայտարարված մրցույթը:

Արդյունքում՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին ներկայացվել է ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02 ծածկագրով գնման ընթացակարգի 1 չափաբաժնի մասով պայմանագրի նախագիծ՝ այն ստորագրելու համար:

«Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն ստորագրմանը ներկայացված պայմանագրի նախագիծը՝ 1-ին չափաբաժնի մասով՝ չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվել է 4 ներքին աուդիտորներ, ինչը պահանջվում էր վերը նշված ընթացակարգի հրավերի աշխատանքային ռեսուրսներ բաժնում, այնինչ՝ 2020թ. ներքին աուդիտի տարեկան ծրագրում պահանջվում է 5 ներքին աուդիտորներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՑ-ԼՕ-2020/25 ընթացակարգը նախաձեռնվել է 10.02.2020թ.՝ հիմքում դնելով ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02 ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի հայտը մերժելու հիմքով, որի վերաբերյալ gnumner.am տղեկագրում առկա չէ որևէ արձանագրություն, այնինչ՝ «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում" ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում առկա է 04.02.2020թ. թվագրված թիվ 3 արձանագրություն, որտեղ մեկ պարբերությամբ նշված է, որ ՓԲԸ-ն դարձել ընտրված մասնակից, ՓԲԸ-ին առաջարկվել է պայմանագրի նախագիծ և որ ՓԲԸ-ի հայտը մերժվել է պայմանագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով:

Հաշվի առնելով, որ gnumner.am տղեկագրում հրապարակված <<Պայմանագիր կնքելու մասին>> որոշման հայտարարությունը հրապարակվել է 17.12.2019թ. և անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օրը, որից հետո Պատվիրատուն՝ ոչ շուտ քան 2 օրացուցային օրը մասնակցին ներկայացնում է առաջարկվող կնքվելիք պայմանագրի նախագիծը, որպեսզի մասնակիցը 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրի և Պատվիրատուին ներկայացնի պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, ուստի «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում” ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի ի հայտ են եկել 14.01.2020թ. և հետևաբար հիմքերը պետք է ներկայացվեր լիազոր մարմին մինչև 19.01.2020թ.:

Այսինքն անհասկանալի պայմաններում «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի հայտը մերժելուց միայն 1 ամիս անց Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար /նախաձեռնվել է՝ 10.02.2020թ./:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով (տե՛ս, «ՎՏԲ–Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԷԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգ /ՍՅ-ԼՕ-2019/233/, որի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.–ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ….:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի

թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմասփեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից թույլ չի տրվել "Գնումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի "ա" ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության որևէ խախտում, ուստի և առկա չեն «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:»:

Մասնակիցը 02.03.2020թ.-ի գրությամբ ներկայացվել է դիրքորոշման լրացում, հայտնելով հետևյալը.

««Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի քննության վերաբերյալ 27.02.2020թ. տեղի ունեցած նիստի ժամանակ հայտնեցինք, որ «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվել էր 4 ներքին աուդիտորներ, ինչը պահանջվում էր վերը նշված ընթացակարգի հրավերի աշխատանքային ռեսուրսներ բաժնում, մինչդեռ ծանոթանալով 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրի նախնական տարբերակին և հասկանալով, որ ծրագրում նկարագրված աշխատանքների կատարման համար պահանջվում է առնվազն 5 աշխատակից՝ Ընկերությունը, ըստ էության, չներկայացրեց կնքված պայմանագիր՝ դրանով իսկ հրաժարվելով պայմանագիրը կնքելուց:

Ձեր կողմից հարց բարձրացվեց, թե ինչ ազդեցություն ունեցավ այն հանգամանքը, որ միայն պայմանագրի կնքման փուլում պարզ դարձավ, որ անհրաժեշտ են 5 աշխատակից, և արդյոք Ընթացակարգի հրավերում նկարագրված աշխատանքից մասնակցին պարզ չէր դառնում դրա ծավալը, որպեսզի Ընկերությունը հստակ հասկանար, թե ինչքան աշխատակից է պետք նկարագրված ծավալը իրականացնելու համար:

Այս կապակցությամբ Ձեզ ենք ներկայացնում «ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով հայտարարված մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիրը, որի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ մրցույթով նախատեսված աշխատանքի հստակ ծավալ սահմանված չէ, տեխնիկական բնութագիրը կազմված է ընդհանրական հատկանիշներով՝ հղում կատարելով ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի պահանջներին: Նշված տեխնիկական բնութագիրը ուսումնասիրելիս՝ «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն ոչ կարող էր

իրական պատկերացում կազմել թե՛ իրականացվելիք աշխատանքների ծավալի և թե պահանջվելիք աշխատողների թվաքանակի վերաբերյալ:

Վերոհիշյալ տեղեկությունը հնարավոր եղավ ստանալ՝ բացառապես ծանոթանալով 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրի նախնական տարբերակին: Իսկ ինչպես հայտնեցին Պատվիրատուի ներկայացուցիչները 27.02.2020թ. տեղի ունեցած նիստի ժամանակ, նշված ծրագիրը նախապատրաստվել է միայն «ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով մրցույթը հայտարարելուց հետո, և հասանելի դարձել մասնակցի համար միայն պայմանագրի կնքման փուլում:

Հենց սրանով է պայմանավորված եղել «ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրի թերի լինելը, և «Աշխատանքային ռեսուրս» որակավորման չափանիշի մասով մրցույթի և 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրի միջև հակասությունը, ինչը հաստատվեց նաև պատվիրատուի ներկայացուցիչների կողմից հրավիրված նիստի ժամանակ:

Հարգելի պարոն Օհանյան, «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում" ներառելու հարցը քննելիս՝ խնդրում ենք նկատի ունենալ նաև սույն գրությամբ ներկայացված փաստարկները:»:

4. <u>ՍՑ-LO-2020/25 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.12.2019թ.-ի նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Հանձնաժողովի 12.12.2019թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ մասնակցիների չեն ներկայացել բանակցություններին:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակից ճանաչել «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին:

17.12.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 23.12.2019թ.-ին էլեկտրոնային տարբերակով ծանուցել է «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին և ներկայացնելով ներքին աուդիտի ծառայությունների պայմանագիրը՝ առաջարկել է հրավերով սահմանված ժամկետում այն ներկայացնել Պատվիրատուին:

Հանձնաժողովի 04.02.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ անգործության ժամկետի ավարտից հետո Մասնակցին առաջարկվել է կնքել պայմանագիր, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը, ինչի արդյքունքում վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1494-2020 գրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը

հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՄ ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած նաև «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն, Հանձնաժողովի 12.12.2019թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է ընտրված մասնակից:

17.12.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 23.12.2019թ.-ին էլեկտրոնային տարբերակով ծանուցել է «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին և ներկայացնելով ներքին աուդիտի ծառայությունների պայմանագիրը՝ առաջարկել է հրավերով սահմանված ժամկետում այն ներկայացնել Պատվիրատուին:

Հանձնաժողովի 04.02.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ անգործության ժամկետի ավարտից հետո Մասնակցին առաջարկվել է կնքել պայմանագիր, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը, ինչի արդյունքում վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Անդրադառնալով Մասնակից կողմից բերված այն պատճառաբանությանը, որ *««Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն ստորագրմանը ներկայացված պայմանագրի նախագիծը՝ 1-ին չափաբաժնի մասով՝ չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվել է 4 ներքին աուդիտորներ, ինչը պահանջվում էր վերը նշված ընթացակարգի հրավերի աշխատանքային ռեսուրսներ բաժնում, այնինչ՝ 2020թ. ներքին աուդիտի տարեկան ծրագրում պահանջվում է 5 ներքին աուդիտորներ:»,* Բողոքներ քննող անձը հարկ է համարում, փաստել, որ այդ հանգամանքներն ենթակա էին պարզման մինչև Մասնակցի կողմից պայմանագիր կնքելը, ինչը Մասնակցի կողմից չի իրականացվել:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում անդրադառնալ նաև, Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշման առարկությունների հիմքում դրված Հանձնաժողովի կողմից Կարգի 45-րդ կետի խախտման փաստին և արձանագրում, որ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար անհրաժեշտ է Օրենքի 6-րդ հոդվածի 1-

ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի առկայությունը, ինչպես նկարագրված է Կարգի 45-րդ կետի դրույթով: Դրանք են՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի ի հայտ գալու փաստը պետք է արձանագրվի կամ ամրագրվի Հանձնաժողովի կողմից կայացված համապատասխան ակտով (արձանագրություն, որոշում, հայտարարարություն):

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձանժողովի կողմից պահպանվել են Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված ժամկետները: Այն է՝ Հանձնաժողովի 04.02.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ ամրագրվել է Մասնակցի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու հանգամանքը, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի 05.02.2020թ.-ի թիվ 05/6.1/00599-2020 գրության հիման վրա, «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով 10.02.2020թ.-ին նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1494-2020 գրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/25 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**